

Հայ ազգի համար, որի հոգին ծխացող արեան ծովերի միջից անընկճելի կորովով ելաւ, յուսով աուցուն լաւագոյն ապագայի համար, Ոյ, այսուհետեւ օտար ազգերի պղատոնական համակրութիւնն չ'է որ վառում է նրա երակներին մէջ կեանքի ոյժը, և ապրելու կենսունակութիւնն, այլ նա այդ ծծում է քառասուն դարերէ ի վեր իւր սիրած հայրենի հողէն, յորում խրուած և ուռնացած է նրա անցեալ հին փառքն, ազգային աւանդութիւնը, պատմութիւնն, գրականութիւնն, և արուեստ, թշնամին շարդեց, կոնոպեց զեղազարդ ծառի ճիւղերն, սաւկայն արմատն փնաց անփնաւ նուիրական հողի մէջ, որի ազնուագոյն մասը կազմում է այսօր թ. Հ. Հայաստանը:

Հ. Գ. ՆԱԱՊԵՏԵԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐՈՒ ՎՐԱՅ

(ԺԶ. ԺԷ. ԺԸ և ԺԹ Դ-Ե. Կ. Պուլս)

(Շար. տես Բազմ. 1927, էջ 208)

Գ.

ԺԸ դար (1700—1800)

Տառնեութեանը դարու սկիզբէն կը սկսի Պուլսահայ մտաւորական զարթումը: 1700ին Կ. Պուլս կը գտնուին արդէն հետեւեալ մտաւորական, գրագէտ հայերը: Մխիթար Սեբաստացի, (1676—1749) համանուն միաբանութեան հիմնադիրը որ Կ. Պուլս գտնուած միջոցին հրատարակած է «Թուվմաս Գեմրացի» և «Մատուրական Աղօթք» (1700):

Խաչատուր Վրդ. Առաքելեան Էրզրումցի (1661—1740), որ 1700ին տպել տուած է «Մեկնութիւն Երզնց Երզոյն Սողոմոնի», Թիֆլիսցի Պետրոս Վրդ. Թարգմանած է Լատիներէնէ «Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննէս Աւետարանչի», «Բանալի ջերմոտանդական» և հրատարակած 1701ին:

Յովհաննէս Հոյով, Նշանաւոր Կ. Պուլսցի վարդապետը, Լատիներէնէ հայերէնի թարգմանած է «Մարկեղոսի Խոստովանարան» և հրատարակած 1701ին. Ասկէ զատ շատ մը երկասիրութիւններ ունի, Հրատարակած է «Գրաբարի Քերականութիւն» մը 1674ին և «Պարզարանութիւն Սաղմոսաց» 1687ին աշխարհաբար լեզուով:

1700—1701ին արդէն 3 հայ տպարան կան Պուլսոյ մէջ: 1. «Սուրբ Էջմիածնի» և Սուրբ Սարգիս Զօրավարի, 2. «Աստուածատուր» 3. «Սարգիս» տպարանները: Ինչպէս Յայտնի է առաջին հայ տպարանը բացուած է Կ. Պուլսոյ մէջ, Արգար զպիրի ձեռքով 1567ին և տեւած մինչև 1569: Երկրորդ տպարանը՝ Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանի՝ 1677—1678: Երրորդ տպարանը՝ Գրիգոր Մարտունացիի՝ 1694—1734:

Շարունակենք շարքը գրիչ շարժող հայ մտաւորականներու:

Գալուստ Կոյժակ՝ Ամասիացի, գրագէտ Պատրիարքը, որ Կ. Պուլսոյ մէջ 1704ին «Լուսաշարիղ» անուն զրբքը հրատարակած է:

Յարութիւն Բիզանդացի Էրսերձի Օղոս, Երուսաղէմի Մինաս Պատրիարքին Սարկաւազը, որ հայերէն և թուրքերէն ոտանաւորները գրած է:

Աւետիք Պատրիարք Երզնկացի (1657—1711), գրած է իւր «Ինքնակենսագրութիւն»էն զատ՝ տաղեր, աղօթքներ, կոնդակներ, «Իր արձակը մամանակին նկարա» «գեղ լեզուն է, զբարարի և աշխարհաբարի «խառնուրդ մը՝ շատ մը թուրքերէն բառերով»:

Տէր Կոմիտաս քահանայ Քեօմիւրճեան 1656—1707 Նշանաւոր գրագէտ Երեմիա Զէլէպիի եղբայրը, որ շատ մը քերթուածներէ զատ «Գործք Առաքելոց»ը ոտանաւորի վերածած է և տպագրած 1705ին:

Հոս տեղն է յիշելու Թէ՛ 1714 թուականին արդէն 4 տպարան կը գործէին

1. Ընդ. Օրացոյց 1901 Կ. Պուլս. Հրանդ Ասատուր. «Կ. Պուլսոյ հայերը և իրենց պատրիարքները»:

Պոլսոյ մէջ, ուր 1700էն 1714, 40 հա-
տորի չափ գիրք կ'ար հրատարակուած,
«Ազաթանգեղոս»ը միասին հաշուելով՝ զոր
էջմիածնայ նուիրակ Զուղպայեցի Աղանի
Աստուածատուր վարդապետ՝ 1709ին տպել
տուած է:

Գեորգ վարդապետ է. Պոլսեցի Միսիյիմ-
օղոս (1681-1758) հայերէնէ զատ՝ հմուտ
յունարէնի, լատիններէնի, թուրքերէնի
և ֆրանսերէնի. որ վեց տարի Բարիզի մէջ
ուսման հետեւած է և որուն տապանագիրը
ատորեւ իւր կարգին արտատպած ենք:

Յովնանէս կոչու Քաղիշեցի. 1715-
1741 բազմած է պատարարքական Աթոռին
վրայ, «Պոլսահայերուն մատուրական շար-
» «ժութին հիմերը դնելով: Այսպէս Սիււ-
» «տարի մէջ բացած է դպրանոց մը, դա-
» «սախօսած է հոն, Եւրոպա ուսմունք ա-
» «ռած Լատինագէտ Խարբերոցի Ղուկաս
» «վարդապետին հետ, և ճարտարական բազ-
» «մաթիւ ձեռնասուններ, որոնցմէ շատը
» «վարդապետ ձեռնադրած է և որոնք քիչ
» «շատ ունէին մատենագրելու կարողու-
» «թիւն: Դարձեալ իւր քաջալերանքով
» «ծաղկած են հայ տպարաններ:

« Կոլոտի պատրիարքութեան 26 տա-
» «րինքուն մէջ է. Պոլիս 80ի մօտ գրքեր
» «լոյս տեսած են: Բանանք — Գիրք Սահ-
» «մանաց—ի Յիշատակարանը:

« ... Ամնայօժար կամեցողութեամբ և
» «ծախիւք գոյից... տեսնոն Յօհաննիսի
» «Սրբազան Եպիսկոպոսի և Ած.արան վար-
» «դապետի Բաղիշեցու վերադիտողի է.
» «Պոլսոյ... Այսինքն զտուր արթոս և
» «զվանօրայս և զհամայն եկեղեցիս շէն և
» «հաստատ պահել, աշակերտոս բազմացու-
» «ցանել ծախմամբ մարմնական գոյից և
» «հոգեւոր կրթութեամբ ան. ային տուրից.
» «Իսկ և զջահաւէտ գրեանս Ս. Վարդա-
» «պետացն տալ տպել և ի յայտ անել
» «սուրբ գիտութեան հետեւողաց »:

Կոլոտի պատրիարքութեան շրջանին
երկու նոր հայ տպարան բացուած են է.
Պոլիս. առաջինը «Աբրահամ»ի (1717)
Իսկ երկրորդը՝ «Բարսեղի և Յակոբի»
(1735):

Յակոբ Նայան Ձմառացի. Պատրիարք
Յովնանէս կոչուտի աշակերտներէն՝ ծնած է
1701ի ատենները Ալեկայ Ձմառայ գիւղը:
(+ 1764). Գրագէտ, լեզուագէտ, հեղի-
նակ և աստուածաբան (տապանագիրը
ստորև), իւր երկասիրութիւններէն յիշենք
հետեւեալները. «Վիւմ հաւատոյ» (1733),
«Քրիստոնէական» (1737) «Մեկնութիւն
Նարեկի» (1745). «Հոգեշահ» (1746) ու-
տանաւոր. «Ճրագ ճշմարտութեան» (1756)
«Ձէն հոգեւոր» (1757). «Գանձարան ծա-
նուցմանց» (1758). «Գիրք Աղօթից»
(1760) եւ այլն:

« ... Նայանէս պատրիարք Գումգարու
» «հաստատած էր պատրիարքական մար-
» «դպրատունը ուր կը դասախօսէր: Հոն
» «դաս կու տար նաեւ Պաղտասար Պոլիքի:
» «Այս նշանաւոր վարժապետը ունեցած է
» «բազմաթիւ աշակերտներ, եկեղեցական,
» «վարժապետ և հարուստի զաւակ. իւր և
» «րեք հասոր փերականութիւն»էն զատ
(1737) զբաժնւ հրատարակած է է. Պոլ-
սոյ մէջ «Տաղարան փոքրիկ» տպուած
1723ին, 1734ին և 1768ին, «Շահաւէտ»
1750ին և «Յանկ գիրք» 1753ին, «Հա-
մառօտ փերականութիւն» 1760ին...
Պաղտասար զպրին ընդարձակ հմտութե-
նէն օգտուած են, ինչպէս կը զրէ ծերունի
Գարրիէլ Քահանայ իւր «Մաղաքադ»ին
մէջ, նոյն իսկ Սիմէոն Երեւանցի, Յովսէփ
Արղութեանց (յետոյ նշանաւոր կաթողի-
կոս) Յարութիւն Բասենցի և Պետրոս Ղա-
փանցի, համբաւաւոր տաղերգու, աստուած-
ծարան և գիտնական վարդապետները ու-
րոնք ճանչցած են զայն է. Պոլսոյ մէջ:
Սիմէոն Երեւանցի որ էջմիածնայ «Ակա-

1. Տիպ ու Տառ. Թէոդէ կ. Պուլիս 1912. էջ 57. ԺԼ
զորուն հայ մատուրական շարքումին մօտէն հետեւելու
համար թանկագին ուղեւորոյ մ'է Բազմէն Եպիս. Կիւ-
լէսէրեանի հետեւել երկասիրութիւնը. «Կոլոտ Յով-

հանէս պատրիարք» պատմագրական և բանասիրական
ուսումնասիրութիւն. Ազգ. Մատենադարան ԽԶ. Վիեննա,
Միխիթարեան Տպարան. 1904:

դեմիա»ին մէջ ուսած և հոն դասախօսած ալ էր, 1748ին Պոլիս եկած էր:

« Եւրոպ Ամբիայ շատ համակրած էր «այդ պերճախօս վարդապետին և 1751ին «հետք Երուսաղէմ տարած էր զայն. դարձ «ձին» 1752ին, կը գտնենք զայն Պալա- «թու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն Գա- «րեայ Խուցը ուր Պորփիրի հինգ ձայ- «նը կ'աւանդէր հասակաւոր աշակերտ- «ներու, որոնք իր շուրջը հաւաքուած էին: «Այդ միջոցին ճանշցած ըլլալու է զայն «Մեղիքեղեկ բանասէր, որ «ընդ հովու- «անս Պալաթու Ս. Հրեշտակապետ եկե- «ղեցւոյն» 1764ին գրած է Խակոթիւն «բանի անտիպ երկը:

« Կ. Պոլսոյ մէջ Նալխանի օրով 23 «տարուան շրջանի մը միջոցին 60ի չափ «գիրք տպուած է. 1761ին տպուեցաւ «հոն, Թուրք մայրաքաղաքին մէջ հրատա- «րակուած առաջին օրացոյցը, զոր պա- «տրաստած էր Սիմէոն եպիսկոպոս երեւան- «ցի, երեւելի Յովսէփ Արղովթեանց կա- «թողիկոսին ուսուցիչը: Ինչպէս յայտնի «է, առաջին հայերէն օրացոյցը հրատա- «րակեցին Վենետիկի Միսիթարեանները «1757ին և կանտոնաւորապէս կը շարու- «նակեն մինչև այսօր¹:

Նալխանի պատրիարքութեան շրջանին մշակութային կեանքը պէտք է խորին ու- սումնասիրութեան առարկայ ընել, ժանա- ւանդ որ աղբիւրներ և ատաղճներ չեն պակսիր:

Ճամճոս Օղոս Յակոբ դպիր. Թարգման Դուէտի զեպականատան, որ գիրքեր Թարգ- մանած և հրատարակած է. զոր օրինակ «Իրք խրատական» 1723, «Օրօյօլիօն» 1749, «Նեւստոնի փիլիսոփայութիւն» 1745: Ձեռագիրները կը գտնուին Երուսաղէմի վանքը. վախճանած է 1767ին, տապա- նագիրը ընդօրինակուած ստորև. Թակոր դպիր՝ Նալխան պատրիարքին բարեկամն էր. այս վերջինը իրեն Թարգմանեկ կու տար

իր փափաքած եւրոպական հեղինակները: Մանուկ Սրահէլ Կ. Պոլսեցի, որ գրած, շարած և տպած է անձամբ «Գաւազան կրկնագոր» 1750, «Երգարան» 1752, «Լուծիչ տարակուսանաց» 1754, «Ակն լուսատու» հայ տառերով և Թուրք բառե- րով 1782ին:

Գեորգ դպիր Պարթեյ (Գեորգ դպիր պալաթական) 1737-1812: Լեզուագէտ, բանասէր, պարսկերէնէ և յունարէնէ Թարգմանութիւններ ունի, մեծ մասով մե- ռագիր, պատմական երկեր և պարսկահայ բառարան մը:

Պետրոս Եպիսկոպոս Բեղրումեան որ կ'ըս- ուի թէ իւր ժամանակին առնէն բեղնա- ւոր գրիչը եղած է և տարիներով Կ. Պո- լիս բնակած (1782-1795):

Կարգասեցի Պօղոս քոստանայ. Կաղզուան- ցի Ձաքարիա Պատրիարքին (Խըլը) 1773 -1781, եղբորորդին և կենսագիրը. հեղի- նակած է «Յուպ քահանայից» գիրքը, տը- պագրուած 1792ին: Ասկէ զատ գրած է նաև «Երթթուաններ», Տապանագիրը ընդ- օրինակուած ստորև:

Օտարացած հայերէ յիշենք.

Մուրադա Տ'Օսոս (Mouradja d'Ohs- son) 1740-1803, Գաղատացի սերունդէ. Կ. Պոլսոյ Դուէտական զեպական 1795ին. նշանաւոր հեղինակ և պատմագիր, գրած է ֆրանսերէն:

Գոգմա Տէ Գարպոնեանոյ (Cosma de Carbognano) Կոզմաս Քէօմիւրեան, Ակնցի սերունդէ, Երեմիա Չէլէպիի եղբորը Թոռ. Թարգման Կ. Պոլսոյ Սպանիական զեպականատան որ իտալերէն լեզուով 1794ին Պոլսոյ տեղագրութիւնը գրած է և հրատարակած (Topografia di Co- stantinopoli).

Վենետիկի Միսիթարեան բարգամադին միաբան հայր Ղուկաս վարդապետ ինճի- ճեան այս գիրքէն շատ բան արտատպած է իր մէկ երկասիրութեանը մէջ²:

1. Ընդարձակ Օրացոյց 1901. Հրանդ Ասատուր «Կ. Պոլսոյ հայեր և իրենց պատրիարքները», էջ 145-147:

2. Աշխարհագրութեան Զորից Մասանց Աշխարհի. Եւ.

րօպիտ. Հատոր Ե. Օսմանեան Տէրութիւն, Ի Վենետիկ Ի վան Սրբոյն Ղազարոս. յամի Տեառն 1804, Ի Թուրք Հայոց ՌՄԿԳ:

Յովհաննէս Զեկայի Սեդրոսեան, Ալեքի սերունդէ (Marchese Giovanni de Serpos). ունի ընդարձակ երկասիրութիւն մը խաւերէն լեզուով հայ եկեղեցւոյ մասին զոր հրատարակած է 1786ին:

Մինչև 1790 թուականը որ ատեն Շը-նորհը Մկրտիչ Ամիրան Գում զարու ան-դրանիկ թաղային վարժարանը հիմնեց, հայ տղաց ընդհանրապէս փերեզակի խա-նութներու, խաներու և տուններու մէջ կար-գալ գրեւ իր սորվէին: Այսպէս «Մանկա-տուն»-ներ կային:

1. Ի Պալատ «Սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին» ուր մանկավարժ էր Սար-գիս դպիր Սարափ Յովհաննէսեան: Այս վերջինը ծնած է 1750ի ատենները և մե-ռած ժիժ դարուն սկիզբները. հեղինակ «Կ. Պոլսոյ Տեղագրութիւն» անուն ձեռա-գիր երկասիրութեան:

2. Մատթէոս դպիրին «մանկատունը» նորէն Պալատ թաղը: Մատթէոս դպիր (1740-1825) մանկավարժ, տպագրիչ և հեղինակ հրատարակած է փոքր տողոց յա-տուկ դասագրքեր և տպագրած շատ մը կրօնական երկեր իւր սեպհական տպա-րանին մէջ:

3. Հռչակաւոր մանկավարժ թագաւոր վարժապետ Ալանեանի «մանկատունը» 1782ին, իսկ ուսմունք առած է 1783էն մինչև 1787 Ներսէս Աշտարակեցի կաթո-ղիկոս, իւր մանկութեան տարիքին:

Քանի որ տապանաբարբերու վրայ պիտի խօսինք, յիշենք նաև Ռաֆայէլ «պատկե-րանարար»-ը որ գերեզմանաբարբերու վրայ արձանագրութիւններ կը փորագրէր և ուրունը-չգողացուածները ի հարկէ-ցարդ անա-դարտ մնացած են մեծ մասով:

Կ. Պոլսոյ հայոց մշակութային զար-գացման ազդակները այսչափ մը յիշելէ յետոյ աւելցնենք նաև որ անոնց տնտե-սական վիճակը շատ զոհացուցիչ կերպով բարելաւուած էր արդէն: Թուրքիոյ մայրա-քաղաքին հայութիւնը 18րդ դարուն վեր-ջերը 66 «էսնաֆութիւն»-ներու բաժ-նուած էր. և արդէն երեւելի ամիրաներու, վաճառականներու, մանաւանդ արհեստա-

ւորներու ստուար խումբ մը իւր գործու-նէութեան շրջանակը հետզհետէ կ'ընդ-լայնէր:

*
*

Այսպիսի նպաստաւոր ժամանակամի-ջոցին ապրող հայերը նախորդ 2 դա-րերուն հետ բաղդատելով աւելի ներկայա-նալի մանաւանդ «գրական» յիշատակա-րաններ ձգած են մեզ: Տպաւանաբարբե-րու զարգացման զանգուշերը աւելի ձեւաւոր, աւելի նուրբ և աւելի ճաշակաւոր են: Գիրքեր գեղեցիկ և համաշափ (խորաբան-դակ և բարձրաքանդակ, գլխագիր երկա-թագիր): Խոշոր միակտուր մարմարէ պա-տրաստուած դամբարանները, ընդհանրա-պէս շատ մաքուր յղկուած և բանուած են: Ասոնցմէ ամենէն գեղեցիկներուն ընդօրի-նակութիւնները պիտի երևին մասնակի կերպով մեր ուրիշ մէկ ուսումնասիրու-թեան մէջ:

Սոյն հարեւանցի ամփոփոյրը բաւ հա-մարելով առ այժմ, անցնինք մեր բուն նիւթը կազմող տապանաբարբերուն

1. Դուք հողազարմին ծնունդ Աշտին:

Տեսք զիմ վիճակ ողբոց արժանին: Մինչ հանգոյն այլոց բանակն զր. մին, Անոգ լըլէի ի վերայ երկրին. Յայնժամ զիս հատու մանգաղ դռնագին, Ընդ հողով մահու էարկ զիմ մարմին: Ի լրման չափու երեսուն ամին Արուզագունի կենաց հասակին: Ես էի ծնունդ ձէլալեան տոհմին Սերոբէ ձայնեալ՝ ծննդեամբ կրկին Մղեսի անուն շուք էր իմ անձին Բայց այժմ տապան Աստուած կամը Էին 1709ի մայիսի 28

2. Այս է տապան հանգ տեան Հրարցի բա բունի Ամբասն վա րդապետին որ է մի արան Սուրբ յանապատին Շատիկու-որ փոխն ցաւ առ Ա. ԹՎն

ՌՃՀԵ Ին

3. Այս է նաղան հանգս

տեան Գնալեցի
բարունի Աժ. աբան
Մեկտիսէթ վարթ
ապետին որ միաբ
ան Սբ. Աթոռի Գան
ձասարու որ փոխեց
առ Աստուած թվ ԹձՀՆ.
օգոստոսի ԻԵ

4. Այս է տապան մարիանէի,
Կնոջ բարույ և համեստի,
Գտներ մեծի քահանայի,
Երանելոյ կոմիտասի:
Սա քէմուռնեանց տոհմէն ասի,
Ենեալ սնեալ յայսմ կենի,
Լցեալ ամօք Ե երեքի
Հանգեալ ի տէր բարի վարուք:
Յամի Թէճի եւ Թիւ զուգեալ էին
ի մետասան փետրվարի.

5. Այս է տապան վարդապետին,
Սրբակրօն Տէր Պետրոսին:
Որքան եկաց սա յայսմ կենի,
Տանիչիւր ի ցաւս ողորմելի:
Թէ և նեկիւր և զցաւ կրէր
Սակայն երբէք ոչ տրանջէր:
Սա Թարգմանեաց զգիրքն զայն,
Որ անուանի Խըթան զղման:
Մականուն իւր սա Մօհուպեան.
Ունէր զՅակոբն հայր ինքեան:
Վախճանեցաւ ի յայնմ ամի
Յոր եօթն հարիւրն ընդ հազարի,
Երեսուն և վեց թուով բարդի
Որք մերձենան յայսմ տապանին
Զաղօթս առնել մի ձանձրացին:

« Տէր Պետրոս Միսիմար կոստանդ-
նուպօլսեցի Մօհուպեանի լատիններէն է
Թարգմանած գիրքը կը կոչուի « Խթան
Զղման և Առանձնախօսութիւն միջնահիւ-
սեցեալ բանիւրն Աստուածաշնչի » տպե-
ցեալ.... Ի հայրապետութեան Տեառն
կարապետի ամենից հայոց Կաթողիկոսի,
յամի Տեառն 1727, Մայի 25, Ի վէնէ-
տիկ: Ի Տպարանի Անթօնի Պոթթուլի, Հրա-
մանաւ Մեծաւորաց, և Փոքիլիէնիով Գե-
րազանցագունեղի Մերակուտի »:

Թարգմանութեան լեզուին վրայ գա-

ղափար մը կազմելու համար Յառաջա-
րանէն կ'ընդօրինակենք քանի մը տող:

«... Գրքգուկս այս գործունեայ է սփռաւ...
« Կի տպարկեցեալ ի հոռօ, ի տաւրին, ի
« պասան, ի վէնէտիկ, և ի պատուայ ի
« յօգուտ իւրայնոց յորմէ և ես շարժեցեալ.
« մինչ զի զժամանակս իմ լսելոյ զուսուց-
« մունս Գերարգելի վարդապետին իմոյ
« (և աստուածաբանութեան) Խաչատրոյ
« Էրզրումեցոյ Առաքելական միասիօնաւ...
« ըրի, ծախեցի ի Թարգմանութեան վասն
« օգտի մերոյնոց... »:

Ահաւասիկ նոյն մը այն հայերէնէն զոր
կ'ուսուցանէին այն ժամանակները խա-
չատուր վարդապետ Առաքելեան Էրզրում-
ցի և իւր նմանները:

6. Ապտուլլահն տըր պու մէզար խաքի
Էքսան Էյլէտի բուզկայր.

Այս է տապան հանգստեանի. Կտրիճ
Սիրուն և գեղեցկի. Անձամբն ուժեղ
Քաշ և արի. Անոյշ զրոյցն զուարճալի.
Ապտուլլահ անուն սա կոչի. Զալի
Զատէ վերածայնի. Կարի հմուտ
Ի արհեստի. Էր ոսկերիչ յոյժ
Անուանի. Իսկ միամօր իւր ծնողի.
Քսան և հինգ ամադ էր ի.
Յորժամ եմուտ յայսմ չիբմի,
Եթող կակիժ ազգատրամի. Մայրն
Լայր աղեսալի. Քաղցրիկ որդի իմ
Սիրելի. Հայրն կոծէր դառն ողբալի.
Աղիողորմ անպատմելի. Որք հանդիպիք
Յայս տապանի. Ատէք սմայ զՏէրն
Ողորմի. Եւ զհայր մեր որ գկնի. Զի Տէր
Յիսուս ողորմեսցի. Թիւն հայկական
Ըստ տմարի, հազար հարիւր
Յուժսուն երկուքի, օգոստոսի:

Սոյն տապանաբարը սքանչելի քան-
դակներով գեղազարդուած է արաբական
դրուագներ և « Լալէ տէվրին » յիշեցնող
(Թրքական վերածնունդ) կակալներ զըլ-
խաւոր զարդերը կը կազմեն անոր:

7. Այս է տապան հանգստեան
Տէր Կոմիտասի դուստր

1. Հայկական Նոր Մասնագրութիւն և Հանրա-
գիտարան հայ կենցիկ. Հ. Արսէն Ղ. Ղազիկեան. ԷՆ
1142.

Հրոփսիսմայի խաթունին
Որ փոխեցաւ ի կեանս թժ ՌՄԸին

8.

Գիր դե	Դժ վազ
« Իրբեւ	Կար է
զինիք է	մահ
վր. սրտի	քան զսէր

Դուստր իմ ցանկալի, Տուտի նազելի.
Մահ քո յողբալի, արար զիս լալի.
Մաղիկ նոնենի, կանանչ վարդենի.
Եղարդ ի շիրմի, ի հող տապանի.
Հնգից երրկաց մինչ հասեր ամաց,
Մեկնեալ ի փառաց, իշեր ի կենաց.
Փոխան հարսանեաց զգեստուց բնեզաց,
Կտաւ պատանեաց զքեզ զարդարեաց.
Իշխանի որդւոյ նշանեցեալ քոյ,
Չհասեր պահու հարսանեաց ժամու.
Կսկիծ քոյդ մահու, սրտս ցաւատու,
Էիւր հարսնացու, զքեզ հողոյ հետու.
Դիրք աղօթական, շերմոռանդական,
Ունէր քոյդ բերան մինչ ի կէտ կողման,
Կեանքդ ուրախական մեղ. ողբերգական
Առեւ զվախեան ըստ քոյդ գուշական:

Ո՛վ հայր իմ Գրիգոր,
Զի՛ սգաս յորդոր,
Զի առ Երկնաւոր,
Փեսայն հոգեւոր,
Եմ ժառանգաւոր
Երգելով երգ նոր:
Բնեկացի Շապան օղլու
Տէրացու Գրիգորի դուստր
Տուտի խաթունին
Թժ ՌՃԶԶ

Այս տապանաքարն ալ վերջինն աս-
տիճանի ներաքանդակ զարդանկարներով
(Թուշուն, պտուղ, « Տիվալ », զվրու գարդ
եւայլն) պնդուած է:

Ո՛վ է արդեօք այն գեղահիւս ոտանա-
ւորին հեղինակը:

Ահաւասիկ Տուտի խաթունին հօրը՝ « Իշ-
խան » Գրիգոր Շապանեանի տապանագիրը:

9. Ներ տապանիս եղաւ մարմին
Ան ընտրելոյ բարեգարմին.
Որոյ հանգէտ նըման ցըմին
Դըժար գտանի հազարաց մին:
Զարմ Շապանեան տիրացու Գրիգոր.

Ներ իշխանաց այր պատուաւոր
Ազգիս մերոյ էր շահաւոր
Բայց մահն արար միջակոտոր:
Էր սա խոհեմ, այր հանճարեղ
Յոյժ իմաստուն բանիւ զօրեղ
Խօսքն էր անցուկ ի ամեն տեղ
Անճար իրաց գտանէր դեղ:
Որ ոք ունէր գործ մի զժար,
Սա հաստնէր նըմա յօժար
Շատ մի կեցաւ ցաւօք տկար
Համարեսցէ Տէր ապաշխար:
Որք հանդիպէր այս տապանիս
Լիով սրտիւ տուք զողորմիս
Թժին ՌՃՂԸին
Վետուարի ժէ

Ո՛րչափ մեծ տարբերութիւն կայ հայե-
րէն հին և նոր տապանագիրներու միջև.
Հիմակուանները չոր ու ցամաք, շատ ան-
գամ լակոնական ոճով ափ յափոյ յօրէ-
նուած արձանագրութիւններէ կը բաղկա-
նան մեծ մասով:

Ափսոս որ մեր պապերուն դամբարան-
ները մինչև այս օրս կը կողոպտուին, կը
զոդցուին և կը ծախուին անխղճաբար:
Բանասէրներու հանոյց պատճառելու հա-
մար կը շարունակենք:

Գ. ՀԱՍՍԵՐ

ՄԱՐԻԱ ՍՏԵԼԼԱ

ՆԱՄՈՒԿԸ

Կը մըտածեմ երբեմն. կեանքս եղաւ
Զուր՝ անօգուտ սպասումը մէկ նամակի:
Չըստացայ բնաւ նամակներ:
Այնքան, այնքան, անթուելի, անհամար:
Բայց չընտաւ ինծի այն մէկ նամակիկն.
Ամենէն աղուորն:

Ազգականի ուսուցիչն նամակներ
Բոլորն ալ թուրմ՝ ողորուն
Հեռաւորի տրտմութիւնով սրտառուչ,
Խորասուզուած միւս ափին
Ըստուերներուն մէջ թաղուն.

Բարեւներ անոնցմէ
Որ անծանօթ աշխարհաց
Կախարդական հրաւերներուն ունկնդիր՝
Թափառական կը վազէին